



REV. FR. UNTZAG NALBANDIAN  
ARMENIAN CHURCH OF  
THE HOLY ASCENSION

1460 Huntington Turnpike  
Trumbull, Conn. 06611  
Tel: 203/372/5770

ՍԲ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ  
Տ. ԸՆՁԱԿ ՔԸՆՑ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ, Հոփի

ՅոՆնուար 29, 1987

Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմին  
Բարեխնամ Առաջնորդ Գերշ.Տ.Թորգոմ  
Արք. Մանուկեանին - Նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

1986 ը յաջող եւ յիշատակութեան արժանի տարեթիւ մը եղաւ մեր փոքրաթիւ համայնքին համար: Որպէս Հովիւ նախանձախնդրութեամբ մօտեցայ պաշտօնիս: Այցելեցի աւելի քան հարիւր ընտանիքներ ու նախագահեցի նոյնքան թիւով ժողովներու: Կատարեցի 7 մկրտութիւն, 8 Պսակ եւ 5 յուղարկաւորութիւն: Տարուան ընթացքին, տարբեր երեկոներուն տուի դասախօսութիւններ մեր Եկեղեցւոյ եւ մշակոյթի մասին:

Անցնող տարուան ընթացքին վերակազմակերպեցի մեր գոյգ դպրոցները՝ Կիրակնօրեայ վարժարանն ու Հայ Դպրոցը: Զոյգ դպրոցներուն աշակերտներուն թիւը քառասուկուեցաւ: Դպրոցները օժտեցի կարող դասատուներով: Նոյն ձեւով վերակենդանացուցի Եկեղեցւոյս դպրաց դասն ու Տիկնանց միութիւնը: Մասնաւոր աշխատանք տարի մեր շրջանի երիտասարդ - երիտասարդուհիները ի մի բերելու: Օժման ճաշկերոյթի յանձնախումբը ամբողջովին երիտասարդներէ կազմակերպեցի: Չերդ Սրբազնութեան ձեռօք օժուեցան մեր Եկեղեցւոյ կողքի խորաններն, Մկրտութեան աւագանն ու սրբանկարները: Օժման ճաշկերոյթին ներկայ եղան 170 ծիսականներ ու բարեկամներ: Այս աւելի քան գոհացուցիչ թիւ մըն է, եթէ նկատի ունենանք որ մեր Եկեղեցին միայն 116 տրատու անդամներ ունի:

Տարբեր առիթներով եւ տօնական օրերուն հրաւիրեցի Եկեղեցական ու աշխարհական հիւր քանախօսներ: Ապրիլ 24 ի երեկոյեան ունեցանք Պատարագ եւ հոգեհանգիստ մեր նահատակներուն հոգիներուն համար: Մօտ 100-ի հասնող քաղմութիւն մը ներկայ էր:

Բազում անգամներ այցելեցի Առաջնորդարան: Ս.Ներսէս վարժարանին մէջ ունկնդրեցի Փրոֆ. Գեւորգ Խրլոբեանին նարեկացիի մասին տուած դասախօսութիւնը: Ֆէր լոնի մասնակցեցայ Ղեւոնդեանց տօնին առթիւ Եկեղեցականաց հաւաքին՝ Պատարագ, ճաշ եւ դասախօսութիւն: Այցելեցի Ս.Վարդան ճամբարը:

Վերջերս կը նկատեմ թէ աւելի եւ աւելի ծիսականներ ու Հայ անհատներ Եկեղեցի կը յաճախեն կիրակի օրերը: Մասնաւոր ուշադրութիւն կը դարձնեմ քարոզխօսութեանս, որը գրեթէ միշտ երկվեգուանի կըլլայ:

Գոհ եմ համայնքէս, կը սիրեմ զիրենք: Նոյն ձեւով իրենք ալ զիս կը յարգեն: Լաւատես եմ մեր գաղութին ապագային մասին:

Մնամ Թեմիդ Խոնարհ ծառան՝  
*Sfr. Untzag*  
Ընծակ Քհնյ. Նալփանտեան